ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 1-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հուլիսի 4-ին, շաբաթ.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում ավստրիացի հայտնի բյուզանդագետ, Վիեննայի համալսարանի պրոֆեսոր և ազգագրական թանգարանի դիրեկտոր Հանս Մանդորֆը:

Հայոց Հայրապետի և մեծահարգ գիտնականի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Պրոֆեսոր Հանս Մանդորֆը ոչ միայն Հին Աշխարհի պատմության խոշոր մասնագետ է, այլ նաև հայ ժողովրդի պատմության և նրա մշակույթի մեծ գնահատողն ու հիացողը:

Նրա ջանքերով և նախաձեռնությամբ Վիեննայի ազգային թանգարանի ցուցասրահներում գործում է մեր ժողովրդի պատմությանն ու նրա մշակույթին նվիրված ցուցահանդես, որի ցուցանմուշների մեջ օգտագործվել են պատմական կարևոր փաստաթղթեր և նյութեր հայ ժողովրդի պատմության և մշակույթի վերաբերյալ:

*
* *

Հուլիսի 5-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հովնան աբղ. Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի խորհուրդ մարմնոյ մահ է, եւ խորհուրդ հոգւոյն՝ կեանք եւ խաղաղութիւն» (Հռոմ. Ը 6) բնաբանով:

*
* *

Հուլիսի 9-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ.

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ է մատուցում վանքի վանահայր Տ. Բագրատ աբղ. Գալըստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում մեր թարգմանիչ վարդապետների եկեղեցական, մատենագրական, հոգևոր-հայրենասիրական առաքելության կարևորության մասին:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Աղան ծ. վրդ. Բալիոզյանը Մոսկվայի վրայով մեկնում է իր պաշտոնատեղին՝ Սիդնեյ:

*
* *

Հուլիսի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

*
* *

Հուլիսի 13-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Բյուրականի Հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ:

Գերագույն հոգևոր խորհուրդը իր սույն նիստում հաստատում է Արարատյան թեմի թեմական խորհրդի հետևյալ նոր կազմը.

1. Տ. Գարեգին աբեղա Ներսիսյան
2. Տ. Ռուբեն ավագ քհն. Մարտիրոսյան
3. Պրն. Վալտեր Արամյան
4. Պրն. Լևոն Գարամանուկյան
5. Պրն. Կարպիս Փափազյան
6. Պրն. Էդվարդ Ֆրանգուլյան
7. Պրն. Տիգրան Ծուլիկյան

*
* *

Հուլիսի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս աբղ. Զաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի՞նչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհն ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցի» (Մարկ. Ը 36) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 26-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Շահե արքեպ. Աճեմյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր զաստուածային քո զօրութիւնդ» (շարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Երուսաղեմի սրբազան պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Եղիշե արքեպ. Տերտերյանը և Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

«Էջմիածին» ամսագիրը իր օգոստոսի համարում հանգամանորեն կանդրադառնա Տ. Եղիշե պատրիարքի, Տ. Սերովբե և Տ. Շահե արքեպիսկոպոսների Մայր Աթոռ այցելությունների մասին:

*
* *

Հուլիսի 27-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Արտակ քհն. Սիմոնյանը: «Զկնի սրբոյ պատարագի կատարի Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»: